№ 170 Սեպտեմբերի 12 (24) 1881 Սեպտեմբերի 12 (24) № 170

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրագրացիկ դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ինչում:

Յայտարարութիւնների համար. վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեացեալ ընկերութիւնք հայոց. Նամակ Թիւրքիայից.— ՀԵՌԱԳՐԵՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վենեցիայի աշխարհագրական ժողովը.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 7

Որոնց ատամները ցաւել են, նրանք անշուշտ գիտեն թէ՝ օրքան անտանելի է այդ հիւանդութիւնը, մանաւանդ, երբ ատամնաբոյժերը չը կարողանալով դեղերով այդ հիւանդութեան առաջն առնել, խորհուրդ են տալիս բոլորովին արմատախիլ անել ատամը. Ահա սրանից մի չարաթ առաջ, ատամներիցս մէկը սաստիկ ցաւում էր. տեղական ատամնաբոյժերին դիմեցի, բայց ոչինչ օգնութիւն չը գտայ. Վերջապէս, հաստատ վճռեցի բոլորովին հանել տալ, բայց բարեկամներիցս մէկը, խորհուրդ տուեց ինձ դիմել Հաւլաթարցի պ. Գրիգոր Յակոբեանցին, որին և դիմեցիս եւ ինչ, այդ ինքնուս պարոնը, որ Ներսիսեան գպրոցի չորրորդ դասատանից է դուրս եկել, իր հնարած դեղի զօրութեամբ ամենակարճ մէջոցում ոչնչացրեց ատամս ցաւը. Պարոնը, բացի ինձանից, նոյնպէս բժշկել է Թիֆլիսի նշանաւոր ընտանիքներից շատերին, որոնցից վերկայաթղթեր ունի. Կատարեալ յաջողութիւն կը ցանկանամ մեր երիտասարդ ատամնաբոյժին, իր նորագիւտ արհեստի մէջ.

Ղազարոս քահանայ Յովսէփեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս. 10 սեպտեմբերի.

Սուրբ Գայիանեան օրիորդաց Միջնակարգ ուսումնարանի վարչութիւնը ստացաւ մեծապատիւ պարոն Եպոր Եղիազարեանից Նուէր ի յիշատակ իր հանգուցեալ դուստր Հռիփսիմէի մէկ վիրգինէի տոմսակ 5% տոկոսաբեր առաջին փոխառութեան. № 39. սերի 16083.

Տեսուչ՝ Ն. Խորոմանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք «Journal d'Orient» լրագրի համար Շուշուց. պ. Աւետիս Զօրաբեանից 10 բուբլ. Անցեալ փոստերի հետ կանի 962 բուբլ. Հարկաւոր ենք համարում ասել որ այդ գումարի մէջ մենք հաշուում ենք և այն 400 բուբլ. որ պէտք ստանանք Ղարսից.

—

Հնագիտական ժողովի նիստերը փոխարքայի պալատի մէջ շարունակվում են. Ամեն օր առաւօտ և երեկոյեան նիստեր են լինում. ժողովուրդը մեծ բազմութեամբ է յաճախում նիստերին. Հնագիտական ժողովի անդամները ասում են որ ոչ կիեվում, ոչ էլ կազանում հասարակութիւնը այն համակրութիւնը չէր ցոյց տալիս դէպի Հնագիտական ժողովի նիստերը. ինչ համակրութիւն է ցոյց տալիս Թիֆլիսի հասարակութիւնը. Թիֆլիսցիները փոքր առ փոքր սկըսում են զգալ պահանջ դէպի գիտութիւն. Դա ամենալաւ ապագայցներից մէկն է, որ մեր քաղաքը ճշմարիտ կարող է մի բարձրագոյն դպրոցի, մի համալսարանի.

—

Ներսիսեան դպրոցի ուսուցիչ, Աւետիք Տէր-Գէորգեանց հրատարակել է «Ֆիզիկական, ժողովրդագրական և քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի» վերնագրով մի ձեռնարկ. Տպված է 8ով. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1881 թ.ին. Գրքի գինն է 60 կոպէկ. Այս գրքի վրա, որ մենք ստորնակարգութեամբ ստացանք նրա հեղինակից, կաշխատենք մի այլ անգամ խօսել աւելի մանրամասնաբար.

—

Ստացանք Վիէննայի «Journal d'Orient» լրագրի 37 համարը, որի մէջ դարձեալ յօդուածներ կան հայոց խնդրի մասին. Ֆրանսիական լրագրի խմբագիրը շարունակում է քաջութեամբ պաշտպան հանդիսանալ Թիւրքաց Հայաստանի չաներին. Լրագիրը խոստանում է իր հետեւեալ համարներից մինի մէջ հրատարակել Նուբար-փաշայի կենսագրութիւնը.

—

Թիֆլիսի Հնագիտական ժողովի պատրաստական մասնաժողովի կարգադրութեամբ, ժողովի բացումից առաջ հրատարակվեցաւ «Հնագիտական ուղեցոյց Թիֆլիսի մէջ» (Археологическій Путеводитель по Тифлису) ռուսերէն գրքոյկը. Գիրքը կազմել է պ. Պրոցէնկո. Այդ գրքոյկը բաժանվել է ձրիաբար ժողովի անդամներին.

—

Շատերից լսել ենք հետեւեալ նկատողութիւնը Հնագիտական ժողովի զեկուցանողների մեծ մասի դասախօսելու մասին, այն է որ նրանք գրեթէ ամենքը չատ ցած են խօսում, այնպէս որ պալատի ընդարձակ դահլիճի մէջ չատ դժուար է, իսկ չատ անգամ անկարելի է լսել զեկուցանողների խօսքերը.

—

Սեպտեմբերի 10-ին պ. Երիցեան մի զեկուցում է արել Հնագիտական ժողովի մէջ տասն և մէկերորդ դարու «Թուղարակցիք» անուանված հայոց աղանդի մասին. Նրան պատասխանեց ժողովի մէջ պ. Ամիրխանեանց. Պ. Երիցեանի զեկուցման մասին, որ գրեթէ կրկնութիւն է «Փորձի» մէջ նոյն նիւթի մասին տպված յօդուածի, մենք յոյս ունենք ժամանակով խօսելու. մեր լրագրի էջերում.

—

Սեպտեմբերի 9-ին Թիֆլիսից դէպի Էջմիածին ուղեւորվեցաւ Մամբրէ վարդապետը, Մանկուեանն իր գործունէութեան հաշիւը տալու համար. Լսում ենք, որ Մամբրէն պէտք է եպիսկոպոս ձեռնադրվի և այնուհետև վերադառնայ Թիֆլիս, որպէս Վրաստանի և Իմերէթի հայոց թեմի լիազօր առաջնորդ. Զենք իմանում Աղաֆիրեան Գրիգոր եպիսկոպոսը ինչ պէտք է անի այն ժամանակ Թիֆլիսում.

—

Սեպտեմբերի 6-ին գիշերը. Թիֆլիսի Սիոնական փողոցի մի սեղանաւորի խանութը կողոպտեցին. գողերը տարան, ինչպէս ասում են, մինչև 35,000 բուբլ փող. Գողերը անհետացել են. Կարծում են որ նրանք մտել են խանութը պատուհանից խողովակից.

—

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է դպրոցի տեսուչ նշանակել պ. Արիստոն Յովհաննիսեանցին.

—

Նուիրուց մեզ գրում են. «Այստեղ աւետարանական եկեղեցին օրից օր աւելի և աւելի է տարածվում. Աւետարանական հայերը ունեն իրանց առանձին ժողովարան, ուր հաւաքվում են և լուսաւորական հայերից և ուղղափառներից շատերը, ամեն կիրակի օր.

—

Ստացանք պ. Եպոր Եղիազարեանից յօդուած Կ. Պոլսի Մխիթարեան և յիշատակ իր հանգուցեալ դուստր Հռիփսիմէի մի 5% տոկոսաբեր երկրորդ փոխառութեան տոմսակ № 30. սերի 03593. որ պարոնի խնդիրքով կը հասցնենք Ներսէս պատրիարքին.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԵԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

—

Աւասիկ այն կարեւոր Հիմնագիր, զոր Մի-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՎԵՆԵՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

—

«Порядокъ» լրագրի մէջ կարդում են հետեւեալը.

Պատմում են, որ ժամանակակից յայտնի գիպլոմատներից մէկը Բերլինի կենդրէսի նախընթաց օրը չատպով աշխարհագրութեան դասեր էր առնում քաղաքա-աշխարհագրական վիճաբանութիւնների ժամանակ չը խայտառակվելու համար. Մէկ ուրիշ քաղաքագէտ, եւրոպական մեծ անուանով, Բաթումի վերաբերութեամբ երկար և տաք վիճաբանութիւնից յետոյ, դիմեց իր մասնաւոր քարտուղարին հարցմունքով. «Ըռուդ է գանվում Բաթումը և արժէ արդեօք վիճաբանել նրա համար». Այդ պետական մարդը, չատ կարելի է հնարք էր անում միայն. բայց և չատ կարելի է, որ այս անգամ նա ծանր կերպով էր հարցնում.

Ահա թէ ինչու համար Վենեցիայում հաւաքված աշխարհագրական կենդրէսը քիչ հետաքրքրութիւն չարժեց պետական մարդիկների և պուբլիցիստների մէջ. Լրագիրներն ևս բաւականացան կարճ տեղեկութիւններ տպելով կենդրէսի բացումից առաջ եղած հանդիսի մասին. Այն ինչ հանդէսը և կենդրէսը արժանի էին աւելի մանրամասն նկարագրութիւնների.

Առաջին միջազգային աշխարհագրական ժողովը կայացաւ 1871 թ.ին Անտվերպէնում, իսկ երկրորդը 1875 թ.ին, Փարիզում. Իտալական աշխարհագրական ընկերութեան նախագահ, իշխան Տէանս, համաձայն նախընթաց կենդրէսի վճռին, երրորդ ժողովի կազմակերպութեամբ պարապեցաւ Վենեցիայի, այդ նշանաւոր ճանապարհորդների և ծովագնացների հայրենիքի ազգաբնակութիւնը մեծ համակրութեամբ մասնակցեց պատրաստութիւններին, և հանդէսը, ինչպէս ասում են, չատ հետաքրքիր էր. Ռուսաստանից, Անգլիայի և Նվեցիայի բաժինները տեղաւորված են առանձին գեղեցիկ կերպով զարդարված չինութեան մէջ. Հանդէսը բացված է սեպտեմբերի 1-ից, իսկ կենդրէսը բաց կանի իր նիստերը 15-ին (մեր հաշուով 3-ին). Իշխան Տէանս կարգաց սովորական պաշտօնական ճառը, որի մէջ դաց սովորական պաշտօնական ճառը, որի մէջ չատ գովասանեց Հումբերտ թագաւորին և ողջունեց օտարական հիւրերին. Վերջինների կողմից պատասխանեց կենդրէսի ֆրանսիական ներկայացուցիչ, բարոն դ'Ովրէնան, Լրեկոյեան խնջոյք տրվեցաւ իշխան Տէանսի տանը, ուր հաւաքվեցան ժողովի մօտ 70 անդամներ. Կենդրէսի նախագահ համարվում է գէնուէզեան գուբսը. Թագաւորը մասնակցեց է ներկայ գանվել նիստերին. Անգլիական ներկայացուցիչները թուում գանվում էին և Կ. Պոլսի նախկին դեսպան սեր Հէնրի Լէյարդ, որը յայտնի ի իր արած փորձերով Նինուէում և իր սիրով դէպի հնագիտական հետազօտութիւնները.

Քաղաքագէտների մէջ չատերն են պատահում, որոնք աշխարհագրութեան մէջ առնասարակ որոնք աշխարհագրութեան մէջ առնասարակ և թոյլ լինելով, մէկ առանձին սեր ունեն որոնել և թոյլ լինելով, մէկ առանձին սեր ունեն որոնել և հետազօտել հին աշխարհագրական կէտերը. Հնութիւններով և հնագիտական հազուագիւտ իրերով մանաւանդ հետաքրքրվում են քաղաքագէտները. Հնութիւնների ուսումնասիրական գործիքները. Հնութիւնների ուսումնասիրութիւնը սիրելի պարապմունքն է ոչ թէ միայն այնպիսի նշանաւոր մարդկերանց, որպիսիքն են Գլադստոն և Լէյարդ, այլ և բազմաթիւ երկրորդական անձերի, որոնք ժամանակների խաւարի մէջ որոնում են մութթարութիւն և հանգիստ ներքին կայի անպողոքութիւնների դէմ. Արիստոկրատիայի համար, որը իր զոյութիւնը ցեղի հնութեան վրա է հիմնում, ձգտումը դէպի ամեն հնութիւն դասակարգային անփառութեան հետանք է. հնագիտութեան նշանաւոր սիրողները, որոնք այնքան չատ են Անգլիայում և ուրիշ երկրներում, սիրում են հեռու անցեալը յիշեցնել իրանց հեղինակութիւնը ամրացնելու համար ներկայումս, այն ինչ հասարակ մահկանացուները խորասուզվում են անցեալի խորքերում ժամանակակիցներին մոռանալու համար.

Շատ պայմաններ են հարկաւոր հնագիտական հետազօտութիւններով ամրոնը հետաքրքրելու համար և այդ կողմից մանաւանդ բաղդաւոր զգանվեցաւ հռչակաւոր Հէնրիխ Շլիման, որը իր անունը մուացրեց Հոմերոսի երգած Տրոյայի մնացորդների գիւտի հետ. Նորերումս հրատարակվեցաւ մէկ ընդարձակ նկարագրութիւն բոլոր նրա արած և գտած բաների այն տեղերում, որոնք եղիականի հերոսների կեանքի և քաջագործութիւնների ասպարէզ էին. Շլիման ազատութիւնների մէջ կայ և հեղինակի կենսագրութիւնը Բուդոլֆ Վիրխովի յառաջաբանով և Բրուգշի, Բիւրնուֆի, Մակս Միւլլերի, Վիրխովի և այլ գիտնականների ծանօթութիւններով.

Շլիմանի անունը և գործունէութիւնը այնքան յայտնի են բոլոր լուսաւորված աշխարհին, որ խօսել նրա անգուսլ աշխատութիւնների և նրանց փառաւոր եղակացութիւնների մասին բոլորովին աւելորդ կը լինէր. ամեն մէկը կարդացել է, կամ կարող է կարդալ նրա հաշիւները, ամենքը գանգիլ լսել են նրա հաւաքած այն նշանաւոր գանձերի մասին, որոնք այժմ գանվում են Բերլինի, Աթէնքի և կ. Պոլսի թանգարաններում. Բայց. երեխ, չատերին յայտնի չեն այդ եռանդոտ և վերին աստիճանի բաղդաւոր հետազօտողի կեանքի մանրամասնութիւնները. Այստեղ մենք կը հաղորդենք Հէնրիխ Շլիմանի մասին հետաքրքիր տեղեկութիւններ.

Մանկական տարիներից, Հէնրիխ Շլիման, հայրենական մեկնեանրբեգեան գիւղում, լինելով գիւղական խաղաղ հանդամանքների մէջ, գրաւվում էր հեռու անցեալի երեւակայական պատկերներով, որոնց համար յարմար նիւթ էին կազմում տեղական ասպետական ամրոցի աւերակները իր խորշդաւոր ստորերկրեայ անցքերով և իր գեղեցիկ պահպանված աշտարակներով. Հոմերոսը արդէն այն ժամանակ մեծ տպաւորութիւն գործեց երիտասարդ Շլիմանի վրա, որի մտքումն արդէն այն ժամանակ տպաւորվեցան այն նախագիծերի սերմերը, որոնց իրագործման համար այնքան եռանդով աշխատում էր վերջը. Նրա ծնողները չուտ մեռան, թողնելով նրան հօրեղբօր հոգաբարձութեան տակ. Իկալական ուսումնարանը աւարտելով, տասն և չորս տարեկան երեխան պէտք է իր ապրուստի մասին հոգս տաներ. Նա մէկ փոքրիկ խանութի մտաւ, որպէս հասարակ բանւոր. Հինգ և կէս տարի անցկացրեց նա այդ կեղտոտ խանութի մէջ ծախելով շաքար և կանաչի, ձուկը և սպիրտային խմիչքներ. միայն մէկ լուսաւոր կէտ մասամբ ցրվեց նրան չբնապատող այդ խաւարը. Նա պատահմամբ հանդիպում է մէկ մարդու, որը Հոմերոսից անգիր գիտէր մի քանի գլուխներ և որը մէկ բանասիրական կոսը արտասանեց նրա մօտ. «Երեք անգամ,—պատմում է Շլիման,—կրկնել տուեցի նրան այդ ասատուածային ոտանաւորները, և ես այդ բանի համար տուեցի նրան բոլորը ինչ որ ունէի— մի քանի պիֆէնիգներ, որոնցով ոսի խմեցրի նրան». Մէկ նոր դժբաղդութիւն— արիւն թքել— տարաց-նող գրութիւնից ազատեց նրան. Նա ասում Համբուրգ գնաց, ուր իր թոյլ կազմվածքի շնորհիւ, պարապմունք չը գտաւ. Վերջապէս նրան աղոթվեցաւ «Փորոտէյաս» նաւի վրա նաւաստիի պաշտօն ստանալ, որը Վենեցուէյա պէտք է ուղեւորվէր. Բայց ճանապարհորդութիւնը չը յաջողվեցաւ. 1841 թ.ին նաւը ծովը մտաւ, բայց մի քանի ժամանակից յետոյ Հօլլանդիայի ափերի մօտ կանգնեց. Շլիման ամենասաստիկ ցրտում

ացեալ Ընկերութեանց ցնօրէն ժողովը կեդրոնական ժողովին ներկայեց վերջին նստին մէջ, իւր Ամենապատ. Տ. Մինաս Չերազի ձեռամբ, Հիշագիր, որոյ վրայ մեր տեսութիւնը կը յայտնենք յառաջիկայ թիւերով։

Ցեղաբ երեսփոխանք, Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովոյ յունիս 21-ի նստին մէջ, երբ արդի ցնօրէն ժողովն առաջին անգամ կը ներկայանար ձեզ, պատուաբժան երեսփոխան մը դիտել տուաւ թէ չուներինք ի ձեռին բաւական մանրամասն յայտագիր մը մեր բռնելիք ուղղութեան նկատմամբ։ Ունէինք արդարև, և չէինք կարող ունենալ, զի դեռ ժամանակ ունեցած չէինք մանրամասն ուսումնասիրել Ընկերութեան ներկայ կացութիւնն, որոյ վրայ կարելի է չափել ապագային։ Այսօր, կատարած լինելով հարկ եղած քննութիւնն, կը փութամք պարզել ձեր առջև մեր յայտագիրը։

Ցնօրէն ժողովն համոզուած է թէ Միացեալ Ընկերութիւնք, որք նպատակ ունին կրթութիւն ծաւալել Հայաստանի և կիլիկիոյ մէջ, իմաստուն և ամենէն աւելի արդիւնաւոր գործ մը կատարած կը լինին եթէ դաստիարակութեան նախնական ատոմները միայն մշակեն։ Մեր Ընկերութիւն, որքան փայլուն ապագայ ալ որ կարենայ ունենալ, չը պիտի կարենայ ձեռք ձգել անսպառ գանձեր, Ասիական Տաճկաստանի մէջ բարձրագոյն կրթութիւն ծաւալելու համար։ Հսկայ գործ, որում ձեռնարկած է Բարիզի Ուսումնասիրաց Ընկերութիւնը՝ չը գիտեմք ո՛ր ասիական յաջողութեամբ։ միւս կողմանէ, մեր գաւառացի ազգայնոց կրթական վիճակն այնքան յետնեալ է որ ընտիր նախակրթութեան մը կը կարօտի այսօր, որպէս կը հաստատեն մեր ստացած տեղեկութիւնք։

Ցնօրէն ժողովն, իրաց այս վիճակին գիտակից, կուզայ յայտարարել ձեզ թէ իւր յայտագիր պիտի պարունակէ լոկ նախնական կրթութիւն, իւր երկու աստիճաններով. նախակրթութիւն գիւղերու համար և բարձրագոյն նախակրթութիւն գիւղաքաղաքներու և քաղաքներու համար։

Մեք համոզուած եմք թէ արդի մանկավարժութեան և տեղական պիտոյից պահանջմանցը համեմատ շինուած նախակրթարանք, զորս մեր Ուսումնասիրաբար ներկայացուց այժմ ձեր քննութեան, լաւ պաշտպանէին ձեռքով և լաւ դասագրոց միջոցաւ գործ դրուած, կրնան լիովին գոհացուցեալ լինել Հայաստանի և Կիլիկիոյ ժողովրդեան արդի կրթական պէտքերն։ Մեք համոզուած եմք նաև թէ, բարձրագոյն նախակրթարանի ուսումնասիրաբար աշակերտներն, եթէ կոչում ունին վարժապետութեան, կրնան մի օր դասատու լինել գիւղական նախակրթարանաց և մինչև իսկ բարձրագոյն նախակրթարանաց մէջ, առանց պէտք ունենալու յատուկ վարժապետանոցի։

Եթէ մեր այս յայտագիրն արժանանայ ձեր ընդունելութեան, մեր բոլոր վարժարաններն պիտի համակերպենք նմա, փակելով վանայ վարժապետանոցն, որ աւելորդ կը լինի այսուհետև։

Ցնօրէն ժողովն գիտէ թէ վարժապետանոցին փակումն ծանրակշիռ իրողութիւն մ՚է. ուստի կը փութայ պատճառաբանել իւր առաջարկ, ձեր և Ազգին առջև ո և է պատասխանատուութենէ զերծ մնալու համար։

Մեր Հայրենեաց մէջ նախակրթութիւն տարածելու գաղափարը նոր չէ մեզ համար։ Սխալ է կարծել թէ այս գաղափարը ներշնչուած լինի մեզ Ընկերութեան արդի նիզակութենէն, որ կրնայ դարմանուիլ մեր ձեռք առած և ձեռք առնելիք միջոցներով, օժանդակութեամբ ձեր և Ազգին, մանաւանդ որ Լոնդոնի Անգլիական Նպաստամատոյց Ընկերութեան ամենէն Հայասէր և. ամենէն գործօն անդամն, Պ. Ճէյմս Պրայս, երկու օր յառաջ առ ցնօրէն ժողովոյ Ատենապետն հաստատած մի մասնաւոր նամակին մէջ, նոյն Ընկերութեան յաջողումը կաւելաւ։ Դպրոցասիրաց-Արևելեան և Կիլիկեան Ընկերութիւնք իրենց հիմնարկութեան առաջին օրէն ընդգրկած էին նախակրթութիւն ծաւալելու գաղափարն, որ կուսակիցներ ունեցած է Վարժապետանոցը բացող Արարատեան ընկերութեան մէջ իսկ։ Ցնօրէն ժողովոյ ատենապետն Արարատեան ընկերութեան 1876 օգոստոս 8-ի և 1877 փետրվար 27-ի նիստերուն մէջ հռչակած է զայն, Հայաստանի գիւղերէից մէջ նախակրթութիւն ծաւալելու հարկին վրայ պնդելով, և Ընկերութեան միջոցներովն կարելի եղածին չափ շատ աղգայիններ կարելի եղածին չափ շատ դասատարակելու սիրողականութիւնն արտայայտելով։

Այժմ որ Արարատեան ընկերութիւնը միացման պայմանագրի 2 յօդուածի զօրութեամբ, ձուլուած է այս միութեան մէջ որ պարտաւոր է ազգային օգտին գոհել ամէն եռանդութիւն, ձեր առջև է որ կը կերկնեմք անկասելի մեծացած ճշմարտութիւն մը։

Ակն գաս, Արարատեան ընկերութեան ատենադրութիւնը կարդալով, կը տեսնեմք թէ Տփղիսի ազգայիններն, գլխաւորապէս Մշակի յօդուածներէն յորդորուած, բանալ տուած են Վարժապետանոցն, խոստանալով հոգալ իւր ծախքեր. այժմ կը տեսնեմք թէ Մշակ և Ռուսահայք ժամանակ մ՚ի վեր սկսած են կարևորութիւն չը տալ այս հաստատութեան, գրեթէ բոլորովին դադրեցուցեալով իւրեանց ձեռնտուութիւն, որով Վարժապետանոցի ծանրակիր բեռն Ընկերութեան ուսերուն վրայ մնացած է։ Իրաց այս վիճակին մէջ, Ռուսաստանի ազգայինք Վարժապետանոցի փակման իրաւունք տալ կը թուին և ստուգիւ տեղի չունին գժգոհութեան։

Գալով Տաճկաստանի ազգայնոց, սոքա ոչ նուազ իրաւունք պիտի տան մեզ երբ լսեն մեր փաստեր, ոյց գլխաւորներն կը փութամք հաղորդել պատկառելի ժողովոյդ։

Վանայ Վարժապետանոցին համար հաւանական գործերը իրան նուիրելու երիտասարդութեան ժամանակ ուխտեալ իդեալներին։ Նա կատարեց իր առաջին ճանապարհորդութիւնը աշխարհի չորս կողմը, որից, յետոյ լոյս տեսաւ նրա առաջին հեղինակութիւնը Զինաստանի և Յապոնիայի մասին։ 1866 թւին նա փարիզ բնակվեցաւ, ծանր պատրաստութիւններ տեսնելու կրօնական հրատարակութեան ձեռնարկութիւններ անելու համար։ Բոլոր իր առատական գործերը վերջացած էին և կարծես ջնջված. բոլորովին նոր կեանք սկսվեցաւ նրա համար։

Շլիման, որպէս գիտական, գործնական մարդ, յուսադրվում էր գտնել և որոշել բուն յունական պրեհիստորիկ մէջ յիշված տեղերը. նա չէր հաւատում, որ Հոմերոսի բանաստեղծական պատկերները, նրա տեղերի և անցքերի գեղեցիկ նը-կարագրութիւնները կարող են հնարովի լինել, և ոչինչ աւելի։ 1868 թւին նա նորից փոքր-Ասիայումն էր գտնվում, յշելց բոլոր ծովամերձ կղզիները, ուսումնասիրում էր Իթակէի, Միկենի և Տրոյեան դաշտավարի հողը. Հոմերոսի նկարագրութիւնները վերոյշեալ տեղերի իսկապէս պայմանների հետ համեմատելով, նա համոզվեց, որ հին Տրոյայի հնաբերը անհրաժեշտ է որոնել Հիսարլիկ բլուրի վրա։ 1871 թւի աշնանը սկսեցին փորումներ անել. Մօտ 150 բանւորներ, Շլիմանի առաջնորդութեամբ, անդադար մանակցում էին աշխատանքներին. Երկու տարուց յետոյ երեսեցան բերդի պատնէշի մասերը, յետոյ քարած փողոց, և վերջապէս, մէկ մեծ շինութիւն, որը, Շլիմանի կարծիքով, «Պրիամի պալատը» պէտք է լինի. իսկ մի քիչ ժամանակից յետոյ մէկ ամբողջ գանձի հետք գտան, որը իր ժամանակին յաջողվեցաւ ծածկել բանւորների խմբից։ Բանւորները փորելու ժամանակ հանդիպելով մէկ մեծ ամուր ապարկայի, կարծես պղնձից, չուտով ընդհանուր ճաշի կանչվեցան, իսկ Շլիման և իր աշխատակից կիները զարաւոր ոսկիներ գտնվեցան։ Յետոյ, ի՞նչ ապահովութիւն կրնամք ունենալ թէ աշակերտներն վարժապետ պիտի լինին։—Ոչինչ։ Հինգ գիշերօթիկ դասանոցներ ունինք անդ, որք խոստացած են դասատու լինել, որպէս շահնագարեան վարժարանի ժառանգաւորներն խոստացած էին վարդապետ լինել. եթէ դրժեն իրենց խոստման, ի՞նչ պիտի կարենամք անել։—Ոչինչ։ Աւելի հեռին երթալով, կը յայտնենք Ձեզ թէ, Արարատեան ընկերութեան 1877 նոյեմբեր 27-ի նստին մէջ, գործադիր ժողովն ներկայացուցած է մի տեղեկագիր, ուր հռչակած է թէ Վանայ կեդրոնական վարժարանի ձրիավարժ աշակերտներն ազատ են վարժապետ, երկրագործ կամ վաճառական լինել. արդ, եթէ վարժապետանոցի աշակերտներն, այս պաշտօնական յայտարարութեան լինելով, երկրագործ և վաճառական լինին ամբողջապէս, Ընկերութիւնն անուանական վարժապետանոց մ՚ունեցած չը՞ լինիր արդեօք։ Եւ միթէ ձեր մտադրութեան արժանի չէ՞ սա իրողութիւնը թէ Հաճընի մը բարձրագոյն նախակրթարանն, որ վարժապետանոց չէ, արտադրած է աշակերտներ որք այսօր Ընկերութեան միւս վարժարանաց մէջ դասատուութեամբ կը զբաղին։

Վարժապետանոցի հաստատութեան նը-պատակն եթէ անտեսական առաւելութիւն մ՚է, կը մտածեմք որ, թէև սայդ լինի տեղացի վարժապետներու նուազ թոշակով շատանալն, սակայն ուղիղ տնտեսութեան հակառակ է մի քանի վարժապետներէ ամեական 1—2 ոսկի զեղչելու հաւանականութեանն համար կանգուն պահել մի հաստատութիւն որ կը լափէ հազարաւոր ոսկիներ։

Վարժապետանոցի հաստատութեան նը-պատակն եթէ կրթական առաւելութիւն մ՚է, կը մտածեմք թէ այս յոյս չափազանցուած է, զի գրեթէ անհնար է ձեռք բերել այդ առաւելութիւնն ընկերութեան արամադրութեանը տակ գտնուած միջոց-

---

մինչև Ամստերդամ գնաց, ուր աղքատութեան և զրկանքների ազդեցութեան տակ հիւանդ ձեռացաւ, որ գոնէ ժամանակաւոր ապաստան գտնէ հիւանդանոցում։ Այնտեղ նա բարերար ունեցաւ, որը մէկ առևտրական տան մէջ ցրվողի տեղ գտաւ նրա համար։ Այդ ժամանակից է սկսվում նրա ինքնուրոյն և եռանդուն կեանքը։ Նա մօտ 800 ֆրանկ ռօճիկ եկամուտ ունէր. այդ փողերի կէսը իր կրթութիւնը շարունակելու միջոցների համար նշանակեց։ Նրա նիւթական պահանջները բաւականացնվում էին միայն ամենաանհրաժեշտ չափով։ Նա չուտով կատարելագործեց իր գրութեան ձեւ, սկսեց լեզուներ սովորել, մանաւանդ անգլիերէնը և ֆրանսերէնը։ Այդ լեզուներից իւրաքանչիւրի ուսումնասիրութեան համար նշանակեց վեցամսեայ ժամանակամիջոց։ Վեց վեց շաբաթ գործ էր անում հոլանդական, սպանիական, իտալական և պորտուգալական լեզուները սովորելու համար։ Շլիման, վերջապէս, Շրեդէր և Ենկ. առևտրական տան մէջ հաշուապահ և Քոթեցի պաշտօն ստացաւ։ Այդ ֆիրման յաբարերութիւններ ունենալով Ռուսաստանի հետ, ռուսաց լեզուի պահանջ զգացվեցաւ։ Շլիման սկսեց ռուսաց լեզուն սովորել իր սովորութիւնով, առանց վարժապետի, ձեռքում ունենալով Տէլէմաքի մէկ հին և վատ թարգմանութիւն։ Այս կարգում էի, որ գործը շուտ և յաջող կերթայ, եթէ ես Տէլէմաքի պատմութիւնը կը պատմեմ մէկին ռուսերէն։ Ես մէկ աղքատ հրէայ վարձեցի, որը չորս ֆրանկով, գալիս էր ինձ մօտ ամեն օր երեկոյեան և երկու ժամ շարունակ լսում էր իմ նրան անհասկանալի դէկլամացիան։ Այդպիսի վարժութիւնները հարեան բնակիչներին նեղութիւն էին պատճառում, և այդ քանի համար մի քանի անգամ ստիպված էի բնակարանս փոխել. բայց և այնպէս, վեց շաբաթից յետոյ, նա կարող էր արդէն առաջին ռուսերէն նամակը գրել։

Ռուսաց լեզուի գիտութիւնը հիմք դրեց Շլիման ինքնուրոյն առևտրական ասպարէզին. 1846 թւին վերոյիշեալ ֆիրման ազէնտ ուղարկեց նրան Պետերբուրգ, ուր նա արագ կերպով իրան համար գործութիւն կարմեց։ 1852 թ. նա գործը մեծ չափերով էր առաջ տանում. Զինաստրական մի քանի նիւթերի առևտուրը Կրիմի պատերազմի ժամանակ մէկ տարվայ ընթացքում նրա առևտուրը կրկնապատկեց. Նրան խուսափելով, այդ ժամանակը բոլորովին ազատ մնցաց չուներ և մինչև անգամ լրագիրներն էլ չէր կարողանում կարդալ. գրքերի մասին չը խօսելով։ Բայց իսկոյն խաղաղութիւն կապելուց յետոյ, նա նորից սկսեց լեզուներ ուսումնասիրելը։ Այդ ժամանակ այլ ևս գործնական նպատակներ չունենալով, նա սկսեց հին լեզուների լաբիրինթէն և յունարէնի ուսումնասիրութիւնը. 1858 թւին, նիւթական կողմից իրան բոլորովին ապահովված տեսնելով, ցանկացաւ ճանապարհորդել։ Նա բոլոր Եւրոպայի միջից անցնելով, գնաց Եգիպտոս, Սիրիա (ուր սովորեց արաբական լեզուն) և փոքր-Ասիա։ Աթէնքից մտածում էր նա Իթակէ կղզին ուղևորվել, բայց այդ ժամանակ մէկ դատ բացվեցաւ, որը ստիպեց նրան Պետերբուրգ վերադառնալ։ Դատը երկար էր շարունակվում. և այդ ժամանակ Շլիման նորոգեց իր կանգնեցրած առևտրական գործը, այս անգամ արդէն ահագին չափերով. 1861 թւի մայիսից մինչև հոկտեմբերը Ռուսաստանի համար նրա բերել առած ապրանքների արժէքը 10 միլիոնից աւելի էր։ Բացի լեզուից, նրա առևտուրի գլխաւոր առարկաներն էին թէյ և բամբակ։ 1863 թւին Շլիման արդէն այնպիսի գրամագլուխ ունէր, որը գերազանցում էր բոլորին, ինչ որ նա երբ և իցէ կարող էր երազել։ Ներկայումս նրա տարեկան եկամուտը 200,000 մարկ է։ Իր դատի յաջող վախճանից յետոյ, Շլիման թողեց իր առևտրական գործերը իրան նուիրելու երիտասարդութեան ժամանակ ուխտեալ իդեալներին։ Նա կատարեց իր առաջին ճանապարհորդութիւնը աշխարհի չորս կողմը, որից, յետոյ լոյս տեսաւ նրա առաջին հեղինակութիւնը Զինաստանի և Յապոնիայի մասին։ 1866 թւին նա փարիզ բնակվեցաւ, ծանր պատրաստութիւններ տեսնելու կրօնական հրատարակութեան ձեռնարկութիւններ անելու համար։ Բոլոր իր առևտրական գործերը վերջացած էին և կարծես ջնջված. բոլորովին նոր կեանք սկսվեցաւ նրա համար։

Շլիման, որպէս գիտական, գործնական մարդ, յուսադրվում էր գտնել և որոշել բուն յունական պրեհիստորիկ մէջ յիշված տեղերը. նա չէր հաւատում, որ Հոմերոսի բանաստեղծական պատկերները, նրա տեղերի և անցքերի գեղեցիկ նը-կարագրութիւնները կարող են հնարովի լինել, և ոչինչ աւելի։ 1868 թւին նա նորից փոքր-Ասիայումն էր գտնվում, յշելց բոլոր ծովամերձ կղզիները, ուսումնասիրում էր Իթակէի, Միկենի և Տրոյեան դաշտավարի հողը. Հոմերոսի նկարագրութիւնները վերոյշեալ տեղերի իսկապէս պայմանների հետ համեմատելով, նա համոզվեց, որ հին Տրոյայի հնաբերը անհրաժեշտ է որոնել Հիսարլիկ բլուրի վրա։ 1871 թւի աշնանը սկսեցին փորումներ անել. Մօտ 150 բանւորներ, Շլիման առաջնորդութեամբ, անդադար մանակցում էին աշխատանքներին. Երկու տարուց յետոյ երեսեցան բերդի պատնէշի մասերը, յետոյ քարած փողոց, և վերջապէս, մէկ մեծ շինութիւն, որը, Շլիման կարծիքով, «Պրիամի պալատը» պէտք է լինի. իսկ մի քիչ ժամանակից յետոյ մէկ ամբողջ գանձի հետք գտան, որը իր ժամանակին յաջողվեցաւ ծածկել բանւորների խմբից։ Բանւորները փորելու ժամանակ հանդիպելով մէկ մեծ ամուր ապարկայի, կարծես պղնձից, չուտով ընդհանուր ճաշի կանչվեցան, իսկ Շլիման և իր աշխատակից կիները չտապեցին դուրս փորել և ջնկել մէկ նշանաւոր մասսա բրնգեայ, ոսկեայ և արծաթեայ իրեղէնների։ Դա հռչակաւոր «Պրիամի գանձն» էր—ուղիղ հաստատութիւն հոմերական ասացուածների, հարարաթաս վկայութիւն հեռաւոր անցքերի, որ մինչև այդ ժամանակ դիցաբանական, առասպելական ժամանակներին էին վերաբերում. Հին Տրոյայի և մանաւանդ այդ թանգագին գանձերի գլուխ վերին ատիճանի հետաքրքրից ամբողջ լուսաւորված աշխարհը և մանաւանդ փառաւորեց Շլիմանի անունը։ Թուրքաց կառավարութիւնը պահանջում էր յոգուտ իրան բոլոր գանձերի կէսը. դատ սկսվեցաւ և վերջացաւ Նրանով, որ հետազոտողը կամաւորապէս իր միջոցներից մի որոշեալ գումար վճարեց Թ. Կրանը։ Հիսարլիկի շրջակայքներում գտնվեցան Հոմերոսի հերոսների գերեզմանները, գինուորական պատանեկիներով վառանոներով և զէնքերով. Մի խօսքով մէկ ամբողջ գիւղացնական քանաստեղծութիւն, որը մեզ երեսում էր որպէս ֆանտազիայի ստեղծագործութիւն, բարձրացաւ բոլոր կրթված մարդկութեան հպարտանքների առաջ, շնորհիւ Շլիմանի եռանդին և աշխատասիրութեան։ Տրոյական վերջին փորումները կատարվում էին 1879 թւին, և նրանց բոլոր ընդհանուր եզրակացութիւնները մանրամասնաբար նը-կարագրված են վերոյշեալ գրքի մէջ. Նրա Նիման հետազոտութիւններ սկսվեցին և փոքր-Ասիայի այլ տեղերում և ծովամերձ կղզիներում. այդ ժամանակ, Միկենում, չքեղ մատարաններ են գտնված, ուր պահպանված է մէկ նշանաւոր գերեզման, որի մէջ, Շլիմանի ենթադրութեամբ, Ագամէմնոնն է եղել թաղված.

* * *

ներով և Հայաստանի խորն եղող մի քաղաքի մէջ, ուր այնքան դժուար է ուսուցչական ընտիր մարմին մը համախմբել և կրթական բարձրագոյն միջոցներ հայթայթել։ Ցեռչական տեղեկագիրներէն կիմանամք թէ վարժապետանոցի բարձրագոյն կարգի աշակերտներն 16 տարեկան պատանիներ են ընդհանրապես, ուրեմն, մի տարի է, նոքա պիտի աւարտեն գպրոցական շրջանն և պիտի լինին 17 տարեկան ուսուցիչներ։ չը գիտեմք թէ ինչ կարելի է սպասել այսքան մանուկ վարժապետներէ, ենթադրելով իսկ թէ հանճար ունենան, մանաւանդ այսուհետև որ Հայաբնակ գաւառաց մէջ դաստիարակի պաշտօն վարող անձ մը պարտաւոր է շրջահայեաց խոհականութիւն ունենալ, տեղի չը տալու համար այն անհիմն և անկրաւ կասկածներուն՝ որք այսօր գժբաղդաբար կը ծանրանան Վանայ Վարժապետանոցին վրայ և որք գուցէ ամբողջ ընկերութեան կը սպառնան։

Ցնորէն ժողովն կը կարծէ թէ Միացեալ Ընկերութիւնք, որք նպաստ կանկանչեն մի ազգաւ ժողովուրդէ, և որք, իրենց պատհեան գումարը կիսելու մտնեցան, 5 ամսուան ծախուց բաւելու չափ սակայ հագիւ ունին այսօր, այնքան ճիգերով հաւաքուած լուսոյն շռայլորէն վատնած կը լինին եթէ շարունակեն Վանայ գպրոցի 59 ուսանողներուն համար գոհել տարեկան 700 Ղուռնեան ոսկի, մինչև Ապրիլի 128 ուսանողներն կը կրթուին տարեկան 30 ոսկիով, որ գրեթէ կը նշանակէ դաստիարակել Ապիւրցի աշակերտն տարեկան 1 մէճիտով և Վանցի աշակերտն 60 մէճիտով, կամ 1 գպրոցի և 59 ուսանողի մի քիչ բարձր կրթութեանն յատկացուցեալ մի գումար որով կարելի է հոգալ 23 նախակրթարաններ և 3,500 ուսանողներ։

Եւ ինչ գայթակղութիւն ազգին առջև, երբ իմացուի թէ վարժապետանոցի 67 ուսանողներէն 40-ը հարուստ և լոկ 27-ը ազքատ ծնողաց զաւակ են, ըստ նախորդ ցնորէն ժողովոյ մի պաշտօնագրին։ մանաւանդ որ Վարժապետանոցի բարձրագոյն դասատուներէն մին կը գրէ մեզ. „Հաւատացէք թէ աշակերտաց ամբողջութիւնը հարուստի տղաքներ են, անպայման Վարժապետանոց առնուած են։ այս աշակերտաց ոչ մին գրեթէ դասատու ըլլալու մըտադիր է. տղքատներէն երեք կամ չորս հոգի կը գտնուին“ Եւ ինչ ամօթ մեզ համար, երբ լիշենք թէ այս մեծատանց կը բաշխուի այն գումար՝ զոր ամեն տարի կը հայթայթէ մեզ պարտադրելու։...

Ցնորէն ժողովոյ խիղճը չը ներեր շարունակել այս ընթաց և գպրոց բանալ անդր կայ արդէն, ձեռնպահ մնալով անդրոց վայրերուն մէջ, ուր կրթութեան առնուն իսկ չէ լսուած, որ, պարզ խօսկով, կը նշանակէ սև հաց ուտեցողին ճիրմակ տալու ջանալ, փոխանակ սովորական սև հաց հայթայթելու։ Վան հարուստ է և պէտք չունի մեր նպաստներուն, զորս արդար է յատկացուցեալ այն տղքատ գաւառներու որք ամեն օր խնամ և օժանդակութիւն կը խնդրեն մեր ընկերութենէն, և որոց ստիպուած եմք մերժել։ կան պատասխաններ տալ ցաւոք սրտի։ Վան լուսաւորուած է բաւական իւր տեղական գպրոցներով, որոց հասուցած աշակերտներէն ամենք դասատու են մեր Վարժապետանոցին մէջ, և Արարատեան ընկերութենէն ի վեր թափուած ճիգերուն շնորհիւ, ունի այսօր մի վիճակ որ կարող կընէ զայն ինքնօգնութեամբ յառաջանալ այսուհետև, մինչ կան մեր հայրենի հողին վրայ բազմաթիւ գաւառներ, որք բոլորովին անկոյս մնացած են և պէտք ունին արտաքին օգնութեան։ Վան, որ ունի թրբիմեաններ և Արուանձտեանցներ, պէտք չունի մեր առաջնորդութեան, ուստի սակայն կը կարօտին մեր այնքան լքեալ արենակիցներ։ Եւ, եթէ հարկ է անաչառութեամբ ամբողջացուցեալ այս բաղդատութիւն, Վան մասամբ ապերախտ դտնուելուս անձնուէր փոլիթաղալեանի և մինչև իսկ ընկերութեան դէմ, նման Ալաշկերտի և Մարաշի որք չը պիտի մնան անպատիժ եթէ չը դան ուղղութեան, մինչ շատ քաղաքներ և գիւղեր ընտիր տրամադրութեամբ և թախանձագին կը դիմեն Միացեալ Ընկերութեանց հոգատարութեանն։

Եթէ Ընկերութեան գպրոցներէն մին պատկեցուելը կը սխրեցուէ ըզմեզ, միւս կողմէն կը միխիթարեմք մտածելով թէ Վանայ վարժարանի փոփման առաջարկին հետ բերինք ձեզ այսօր չորս նոր վարժարաններու բացման աւետիս, վարժարաններ որք, ծախուց անձնայաւելում մը պատճառելով մեզ, նախակրթութիւն պիտի ծառայեն բաղէշի իգական սեռին մէջ, շնորհիւ Ռոթշիլդ Ցանենժողովոյ բազմարդիւն անձնուիրութեանն, և Գօյանարկի, Զէյթիրմէի և Խոշմանթի արական սեռին մէջ, շնորհիւ տեղացւոց ուսումնասիրութեանն։ Ուրեմն Միացեալ Ընկերութիւնք, մեր առաջարկն ընդունելով, 28 կրթարանի փոխարէն պիտի ունենան այսուհետև 31 կրթարաններ։

Ակէ գաս, միջոցներ ձեռք պիտի առնումք որպէս զի մեր Վարժապետանոցի ուսանողներն չը ՁԽասուին։ ցերեկօթիներն կընան արդէն շարունակել իւրեանց ուսումնները Վանայ ազգային վարժարանաց մէջ, որք այնքան նշանաւոր անձինք ընծայած են ազգին, իսկ 5 գիշերօթիկ ներէն, որոց համար ծախքեր եղած են ցարդ, կընամք երեքը, որք կրտսեր են, փոխադրել Կոփայ մէջ մեր ունեցած գիշերօթիկ վարժարանն, և երկու գարգացեալներն փոխադրել Էջմիածնայ Դէորգեանն, և Հոփաբ Կարապետի նախապէս տուած արտօնութեանն համեմատ։

Ամփոփելով մեր խօսքեր, կը կրկնեմք ձեզ թէ Վան քաղաքը պէտք չունի Միացեալ Ընկերութեանց, որոց սակայն կը կարօտին մեր հայաբաւոր եղբայրներ և քոյրեր, այնպիսիք որք գրեթէ օտարացած են ազգութենէ, կրօնէ և լեզուէ, և որք մեր աչքին առջև կը կորչին հետզհետէ։ Ոմի պիտի խնամէ զանոնք, ոմի պիտի լուսաւորէ զանոնք, ոմի պիտի հայացնէ զանոնք և ոմի պիտի հաստատէ նոցա թէ պաշտպանեալ են։—Ազգային արդի կացութեան մէջ, մեզ անկ է այս պաշտօն։ Մեկ անկ է երեսով թշուառներուն, լոյս տալ ազգեներուն և լոյս լքեալներուն։ Եթէ շարունակեմք հարուստին բաշխել ինչ որ կը Զանամք ազքատին, ծանր պատասխանատուութիւն պիտի հրաւիրեմք մեր վրայ։

Ցնորէն ժողովն, խորհելով այդպիսի պատասխանատուութենէ մը, ձեր դատաստանին կենթարկէ այն յայտագիր զոր պարզեց ձեր առջև։ Վճիռ արձակելէ յառաջ, լիշեցէք, ինարք երեսփոխանք, թէ Ազգին առջև եմք և թէ Ազգն է զերագոյն դատաւոր մեր և ձեր վրայ։

(Մասիս)

---

## ՆԱՄԱԿ ԹԻՐԳԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 30 օգոստոսի

Ինչպէս գրել էին «Մշակի»ն թէ Հայոց հարցը 15 օրից յետոյ մտնէ պաշտօնական բանակցութիւնների շրջանը, ճշդութեամբ այդպէս և եղաւ. ամսոյս 28-ին ժամի երկուսին կէսօրվանից յետոյ, որ ըստ տանկաց ժամ 9½ կանէ, հինգ մեծ պետութիւնների ներկայացուցիչները առաջի նիստը ունեցան ռուսաց դեսպանատան հայոց խնդրի մասին։ Արդէն գիտէի Դերբէս պատրիարքից, որ մեր խնդրի ինիցիատիվը պիտի առնէ ռուսաց դեսպանատունը, որը ամենայն իրաւամբ աւելի չան ունէ Ռուսիայի միլլեթն ու կէս հպատակների երեք միլլիոն արիւնակիցների վիճակը արտի առնելու մէջ, քան թէ Անգլիան, կամ ուրիշը։ Այսպիսով հինգ մեծ տէրութիւնների վեղարներ, բոլորն էլ մի ամենայն հանգարտութեամբ դէպի մի թշուառ և որբ ազգի դատը առաջի զրոյցումը կայացրին ռուսաց դեսպանատանը, որին պիտի այնչափ ուրախ լինի ի հարկէ իրաքանչիւր ռուսատանցի հայ, որը Ռուսատանի պատուի համար թափած իր արեան կաթիլները այս օր վարձատրելիս է տեսնում իր մարդասէր տէրութեան ազգու մտմտութեամբ ի նպաստ Հայաստանի փրկութեան։

Առաջի նիստի մէջ կայացրած որոշումը որչափ էլ հեռաբերիր լինի ձեզ համար իմանալ իր մանրամասնութեանց մէջ, գարձեալ ձեզ շատ լաւ յայտնի պիտի լինի որ այդպիսի բաներ շատ հեշտութեամբ մատչելի չեն հասարակային գիտութեան։ Այսուհանդերձ իմ իմացածիս չափ այդ որոշումը կայացած է Նորա մէջ, որ անմիջապէս խմբագրվի ծանուցագիր թիւրքիայի տէրութեան, որի մէջ առանց որ և է աւելորդաբանութեան կարճ ու կարուկ կերպով պատասխան պահանջվի այն ամբողջ շարք հարցերի, որոնք կառաջարկվեն ծանուցագրի մէջ ամենայն խստութեամբ և էներգիայով։ Ցարկոյս չը կայ, որ այդ հարցերը այնպիսի կերպով են ձևակերպված, որ էլ երկիմի և օդային պատասխանին բնաւ չը պիտի կարողանան հանդուրժել։ Ուրեմն երկու-երեք օր գուցէ չի անցնի, որ հեռագիրը ձեզ հաղորդէ այդ յիշատակագրով սկիզբ առած հայոց հարցի պաշտօնական յուսումը։

Մի կողմից, այո, պարզաբերը քիչ ուշացած են հայոց հարցի այս տարուայ մէջ վերջանալու համար, որովհետև ամառը արդէն անցած է և մեծ Հայաստանի գառնաշունչ ձմեռը, որ կարող է բաւականին արգելարգել լինել բարենորոգմանց գործերի համար, բայց միւս կողմից ամենաքան կախված է դեսպանների տրամադրութիւնից, որը, փառք Աստուծոյ, չատ զգոնը կերպով նպաստաւոր է հայոց դատը քաջբերանփրերին չը գցելու համար։ Դալա լորդ Դիֆֆերինը պիտի աչքատել երեսպարզ դուրս գալ Անգլիայի ժողովրդի առաջ, որը այնչափ գովեց և շնորհակալեցաւ Գլադստոնից, որի ներկայութեամբ Կ. Պոլսի մէջ երկու մեծ հարցեր լուծվեցան։ Ի հարկէ լորդ Դիֆֆերինը չի ուզիլ, որ Անգլիայում ասեն թէ նա մի հատ հարց էլ չը կարողացաւ վերջացնել։ Միւս կողմից Ֆրանսիական դեսպան պ. Տիսսոն չատ հաշվիներ ունի տանելուց հետ, որոնք այնչափ խոնարհացրին նորա ազգային և անձնական արժանապատուութիւնը, չարժանացնելով նաև ուսուցիչներ ընդունելութեան, երբ նա ուզում էր մեծաբերանով ասել, երբ մի երկու ամիս առաջ Ֆրանսիայի Ֆրանսիա էր գնում։

Ասում են այդ վարմունքից յետո նա որոշեց էլ դեսպան չը մնալ Կ. Պոլսի մէջ. բայց ինչպէս գիտացաց և պատուհասնալ ֆրանսիայի դիտմամբ վերադարձաւ. ժամանակաւորապէս իր տեղը, որ դատնալ իր վրէժը առած թիւրքերից. ուստի այժմ Ներկայացաւ Նորան իր ցանկացած առիթը վրէժը լուծելու համար և եթէ կարողացաւ նա լուծել այդ վրէժը հայոց հարցը լուծելով, թող այդ վրէժը Աստուածային լինի, այլ ոչ սովորական մարդկային...

Այս ամենը դիցուք թէ չատ լաւ, բայց այսպիսի մի մեծ բրպէում ինչ է լինում նոյն ինքը մեր ազգը, երբ նորա արժանաւոր պատրիարքը երկու ձեռքով կպած մեծ պետութիւնների եանխին։ «Փրկեցէք Հայաստանս» է կրկնում այսչափ յանդուգն յանդուգնութեամբ. ինչ է լինում, ասում եմ, այսպիսի ժամանակ նոյն ինքն ազգը Կիցուք թէ Կ. Պոլսի մէջ չունենալով ոչ մամուլ, ոչ ուրիշ տեսակ առաջնորդներ. նա օրօրում է իրան զանազան խմստաների ճառերով և անմիտ բանաստեղծութիւններով, բայց ինչ է լինում հայ ժողովուրդը Կովկասի մէջ, ունենալով փառք Աստուծոյ և չատ աւելի խելք, չատ աւելի զարգացում և արժանաւոր հրապարակասներ։ Ինչպէս է չարժվում Կովկասի հայ ժողովուրդը. գոնէ մեր տեսնելով, բերանը բացած նա միայն յօրանջում է. կարծես քունն է գալիս, երբ Նորա հետ խօսում են իրանց օրգանի Վիենայի մէջ օգնութիւն հասցնելու վրայ։ Մինչև այնչափ անպէտ կարելի է կարծել Կովկասի հայերին (խօսքը ի հարկէ հարուստների վրա չէ, որոնք ոչ խիղճ ունեն և ոչ սիրտ). որ նոքա անտարբեր կերպով կը նստեն կը նայեն այն ժամանակ, երբ ազիսարէս ստեղծվելուց յետ հայերին ջնտաղով մի հատ օտար գրող գտնվեցաւ, մինչև կարելի է թայլ տալ մտածել, թէ այդ գրողը պաշտպանութիւն չը պիտի գտնէ չորս-հինգ միլլիոն հայ ազգի կողմից. լաւ. ազգ կը լինենք այն ժամանակ ոչ միայն այդ օտարին, այլ ևս բոլոր օտարների առաջ, երբ «Journal d'Orient» կը հրատարակէ մի օր թէ «տէնդ խրախոյս չը գտնելով հայոց կողմից, ես դադարում եմ նոցա հետ որ ես է առընչութիւն ունենալուց»։ Լաւ. ազգ կը լինենք այն ժամանակ...

Ոչ. այսչափ խայտառակութեան բնաւ չեն թայլ տայ հանանեն մեզ այն ազնիւ մարդիկ, որոնք «Մշակի» խմբագրատանը հեղեղելին իրանց նուէրներով յօդուտ իրանց տանկահայ սուվալ եղբայրներին։ երբ այդ ազնիւ մարդիկ դեռ կենդանի են, մտավոր ոչինչ չունենք դեռ։ Երկիվայ «Journal d'Orient»-ում կարդացի մի բոցային հրաւէր դէպի ամբողջ մարդասէր Եւրոպան ձեռք կառկառելու և փրկելու խեղճ դարեղոր նահատակներին մարդակրծան և աչխարհաւեր բարբարոսների ձեռքից։ Բանի գրնում է մեր այդ կրօնի օրգանը աւելի է ոգեորվում և աւելի վստահութիւն ստանում ամբողջ Եւրոպայի առաջ խօսել յանուն հայերի. մինչև այսպիսի ժամանակ ամոր մի քանի տասնեակ բաժանորդներով պիտի միայն բաւականանանք. մինչև չորացան այն ձեռքերը, որոնք հազարներով ընծայ կը տան օտար անձնավանաց կանանց, բայց անչարժ կը մնան, երբ խօսքը կը գայ ամբողջ հայոց ազգի դատին փատտարան կանգնած մի գրողին...

Հենց այսօր տեղեկանալով ամենասեռ բաւականութեամբ կը չտապամ հաղորդել ձեզ թէ «Journal d'Orient»-ի անարգել Ռուսատան մտնելու համար արդէն կարգադրութիւն է արել մեր տէրութեան Վիէնայի ներկայացուցիչը, որի սիրալիր ուշադրութեան համար ի հարկէ չատ երախտագէտ պիտի լինեն հայերը։ «Journal d'Orient»-ի այս օրվայ համարի մէջ ես չը նորակալութիւն է յայտնած Վիէնայի ուսուցց դեսպանին նորա ցոյց տուած սիրալից մտքամտութեան համար։ Ուրեմն տիմայ Կովկասի հայերը առանց որ և է դժուարութեան կարող են սատանալ «Journal d'Orient»-ը, որը ճանաչված է ինչպէս ռուսաց և հայոց հաւասար բարեկամ։

Չը մոռանամ ասել ձեզ մի հետաքրքիր նորութիւն։ մեր բարեկամ գոկսոր փէչիմալչեան այսօր առաջարկեց Միացեալ ընկերութեան ընդհանուր ժողովի մէջ ուղարկել երկու ներկայացուցիչ այս տարվայ Թիֆլիսում լինելի վարժապետական ժողովին։ Միացեալ ընկերութիւնը ընդունեց այդ առաջարկութիւնը. հեռագրելով այսօր Թիֆլիսի թեմական տեսչին թէ երբ կը լինի ժողովը։ Ուրեմն ուրիշ կանենանք շուտով տեսնել այստեղի մանկավարժներից երկուսին և ճանաչել նրանց։

Գրիգոր Նիկողոսեան

---

## ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 բ. 62 կ., երկրորդ 94 բ., երրորդ 94 բ. 75 կ., չորրորդ 93 բ. 75 ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 226 բ. 50 կ., երկրորդ 220 բ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 բ. 25 կ., երկրորդ 91 բ. 26 կ., երրորդ 91 բ. 25 կ., ոսկի 7 բ. 66 կ։ Ռուսաց 1 բ. Լոնդոնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 բ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա արժէ 272 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

---

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ